Ի նկատի առնելով, որ պրոֆ. Մառի կազմած ցուցակը արդէն բաւական մանրամասն է՝ ես աւելորդ համարեցի կրկին կազմել։

Ձեռագրներից ամենահինը մի աւետարան է՝ հաւանականօրէն Ժ. դարից։

ՎԱՆԻ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

Սևանայ վանքը այժմ ունի հետևեալ կալուածները.

ա. Ցամաքաբերդ և Գոմաձոր գիւղերը, իրենց հողերով, որ հանում է 2273 դեսիատին և 140 ք. սաժէնի։ Աշոտ Թագաւորի նուիրած վեց գիւղերից մնացել են միայն այս երկու գիւղը։ Սրանից տարեկան եկամուտը առնուազը 1000 ր. աւելի է։

Մի թերակղզի, Ելենովկա և Օրդակլու գիւղերի միջև. շահագործւում է իբր խոտատեղի և ձկնորսատեղի. կապալով է տրւում տարեկան 4—500 ռուբլիով։

Երևանում 2 տուն և չորս այգի։

Թիֆլիսում 5 խանութ և մի այգի։

Զանգի գետի վրայ 3 ջրաղաց, որոնցից մինը Նոր-Ձևի, երկաթէ։

Նոր-Բայազէտում 2 ջրաղաց և այլն։

Այս կալուածները տարեկան տալիս են 5—6000 ր. եկամուտ։

Բացի սրանից վանքը ունի 5000 ր. արքունի գանձարանում և մի կտակագիր՝ հետևեալ բովանդակութեամբ. 1890 թուին Թիֆլիսեցի Աղէքսանդր Թայիրեանը իւր հօր՝ Սևանում ճգնութեան ընդունուած Ղազար վարդապետի յիշատակին 3,500 ռուբլի դրամ դրեց արքունի գանձարանում, որ 30 տարի շահեցնելուց յետ, այն է 1920 թուին այդ գումարով Սևանայ վանքում ուսումնարան բացուի [1]։

---

[1]) Հրամանագիր Երևանի կոնսիստորիայի 1890 թ. № 2889.